

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի ավան ՀՊՄՀ

Բան. գիտ. թեկն., դոցենտ

Khachatryanaira21@asp.am

**ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ «ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ (ԿՑԱՆՔԸ ԵՎ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ)» ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ամփոփում

Վ. Կիրակոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ավելի շատ ընդգրկում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը: Երբ 1967-ին Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն Հայոց մեծ եղեռնի զոհ, արևմտահայ բանաստեղծ Ռուբեն Սևակի կյանքի ու գործի վերաբերյալ, ընդամենը 8 տարի էր անցել, ինչ ավարտել էր Լենինականի /Գյումրիի/ մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: Վ. Կիրակոսյանն իր առջև խնդիր էր դրել բացահայտել ու մեկնաբանել երկու դարերի սահմանագծի արևմտահայ քնարերգության զեղարվեստական համատեքստում Ռուբեն Սևակի գրական ժառանգության արժևորումը՝ նկատելով, որ Ռուբեն Սևակի քնարաշունչ երկերը դարասկզբի արևմտահայ գրականության հակասական և միևնույն ժամանակ ամենահետաքրքիր ու տարողունակ երևույթներից են: Փորձելով չխախտել Սևակի ստեղծագործությունների գաղափարազեղարվեստական միասնությունը՝ Կիրակոսյանը տալիս է ժամանակի բազմաբարդ ու հակասական դրսևորումների հոլովույթում մարդու, անհատի, հասարակական միջավայրի ընդհանուր դրսևորումների բնութագրումներ, օգնում ավելի պարզ ու տեսանելի ընկալել բարդ թվացող խնդիրները:

Բանալի բառեր և արտահայտություններ. արևմտահայ պոեզիա, գրականագիտական, ազգային-քաղաքական հայացքներ, Լենինականի /Գյումրիի/ մանկավարժական, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ:

Ներածություն

«20-րդ դարի սկզբին արևմտահայ պոեզիա մուտք գործեց երիտասարդ ու տաղանդավոր բանաստեղծների մի նոր համաստեղություն, որն ընդամենը մեկուկես տասնամյակում ստեղծեց գրական անգնահատելի արժեքներ՝ արևելահայ ժամանակակից բանաստեղծների հետ միասին զարգացման աննախադեպ աստիճանի

բարձրացնելով հայ քնարերգությունը: Բանաստեղծների այդ սերնդից է նաև Ռուբեն Սևակը»¹:

Գրեթե կես դար հայ գրականագիտական միտքը ճանաչում է այս տողերը, չկա բանասիրական կրթությամբ մեկը, ով Ռուբեն Սևակի ստեղծագործություններին² մտերմացած չլինի այս տողերով: Բազմաթիվ կուրսային, դիպլոմային, ավարտական ու մագիստրոսական աշխատանքներ ուղղակի լրացվել ու կայացել են այս տողերով, որոնք բոլորիս հայտնի, բարեկիրթ ու բանիմաց, մեր ժամանակակից գրականագետի՝ Բ. Գ. Ղ., պրոֆեսոր Վլադիմիր Կիրակոսյանի 1972 թվականին լույս տեսած «Ռուբեն Սևակ (կյանքը և ստեղծագործությունը)» մենագրությունից են: Վ. Կիրակոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ավելի շատ ընդգրկում է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը: 1967-ին, երբ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանեց թեկնածուականատենախոսություն Հայոց մեծ եղեռնի գոհ, արևմտահայ բանաստեղծ Ռուբեն Սևակի կյանքի ու գործի վերաբերյալ, ընդամենը ութ տարի էր անցել, ինչ ավարտել էր Լենինականի /Գյումրիի/ մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը, իսկ երբ ձեռնամուխ եղավ այս ուսումնասիրությունը գրելուն՝ 1962-ին, ընդունվելով ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան, լույս էին տեսել Ռուբեն Սևակի գրական ժառանգությանը նվիրված Գևորգ Հատիսյանի՝ 1959-ին և 1965-ին՝ Էդվարդ Զրբաշյանի «Ռուբեն Սևակ» մենագրությունները: Արևմտահայ, հատկապես եղեռնագարկ հեղինակների վերաբերյալ հետաքրքրությունը հիստունական թվականների կեսերից դարձել էր հայ գրականագետների ուշադրության առանցքը: Խորհրդային իշխանությունները, մեզ հայտնի պատճառներով, չէին խրախուսում Եղեռնի թեման ու պատմությունը, որին հակառակ, մի շարք առաջադեմ ու ազգային մտածողություն ունեցող գրականագետներ փորձում էին իրենց գիտական ուսումնասիրություններով մոռացության տիղմից ազատել հայի միտքն ու հիշողությունը: Խորհրդային կարգերի օրոք, այն էլ անձի պաշտամունքի տարիներին՝ 1936-ին, Գյումրիում ծնված ու մեծացած Կիրակոսյանի նվիրվածությունն արևմտահայ գրական ավանդներին մեզ համար ունի իր հիմնավոր բացատրությունը: Այսպես. ցանկացած մեկի, առավել ևս մտավորականի, գրողի ու գրականագետի՝ աշխարհն ու երևույթներն

¹ Տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, Ե., 1955:

ընկալելու, վերլուծելու դիտանկյունը սեփական աշխարհայացքն է: Այն ձևավորվում է և ամբողջանում իրեղեն ազդակներից՝ կյանքի փորձից, հեղինակավոր ու ազդեցիկ անձանց թողած ազդեցություններից: Արխիվային նյութերով պարզել ենք, թե արևմտահայ գրողների և 20-րդ դարասկզբի արևմտահայ բանաստեղծական շարժման խնդիրներով մտահոգ հեղինակություններից ովքեր կարող էին ազդեցություն գործել Կիրակոսյանի աշխարհայացքի ձևավորման վրա:

Սաքո Սարգսյան՝ 1945-1962 թթ. եղել է Լենինականի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի դեկան, այնուհետև հայ գրականության ամբիոնի վարիչ, 1959 - ին տպագրել է «Պետրոս Դուրյան» մենագրությունը: Մինաս Հյուսյան, ով ծննդով Արևմտյան Հայաստանի Վան քաղաքից էր, 1955, 1957, 1964 թվականներին տպագրել է Գրիգոր Զոհրապին նվիրված երեք ուսումնասիրություն, 1948-1952 թթ. դասավանդել է Լենինականի մանկավարժական ինստիտուտում: Հեկտոր Ռշտունի, ում հետաքրքրությունների ծիրում էին Մեծարենցը, Միամանթոն, Վարուժանը. ըստ Շիրակի համալսարանի արխիվի՝ որոշ ժամանակահատված ևս դասավանդել է Լենինականի մանկավարժական ինստիտուտում: Եղեռնի հայակուլ ուրվականը Արշավիր Մխիթարյանին Բիրիսի վիլայեթից բերել էր Գյումրի, 1944 -1956 թթ. Լենինականի մանկավարժական ինստիտուտի պրոռեկտորն էր և հայ գրականության ամբիոնի վարիչը, նարեկացիագետ էր, սակայն արևմտահայ հեղինակների վերաբերյալ ունեցած անմնացորդ նվիրումն ու խորաթափանց գիտելիքները հայրենասիրական հրով փոխանցում էր իր սաներին:

Մեթոդաբանությունը

Հոդվածը գրելիս կիրառել ենք գրականության արժևորման մի շարք մեթոդներ՝ վերլուծական, քննական, համեմատական, համադրական, ինչպես նաև ծանոթացել ենք ճանաչված հայ գրականագետների և տեսաբանների՝ թեմային վերաբերող աշխատություններին: Ուումնասիրել ենք արխիվային նյութեր:

Ժամանակի պահանջը գրականությունից երբեք չի փոխվում. այն իրականությունը պատկերելու արվեստն է: Լոնգֆելդի խոսքերով՝ «Մեծ բանաստեղծին հասկանալու ընդունակությունը գրեթե հավասար է նրա տաղանդին»:

Վ. Կիրակոսյանը գտնում է, որ Ռուբեն Սևակի գրական մուտքը հախուռն ու շոնդալից չեղավ, պատճառը մասամբ այն էր, որ մտքերի ու սրտերի վրա իշխում էին Միամանթոն ու Վարուժանը, մթնոլորտը դեռ լի էր Մեծարենցի պոեզիայի հմայքով: Եվ գրականության մեջ ոչ միայն երևալու, այլև ապրելու իրավունքն իր հուզիչ ու սրտամոտ երգերով Սևակը

շահում է աստիճանաբար՝ երկից երկ, տողից տող, մամուլից մամուլ: Սևակի պոեզիայի առանձնահատկությունն ու հմայքը Վ. Կիրակոսյանը փորձում է ներկայացնել դարասկզբի արևմտահայ գրականության նորահայտ ու համարձակ միջավայրի թեժացած մթնոլորտում՝ եղածների կողքին նշելով ու կարևորելով Ռուբեն Սևակի պոետական հմայքն ու ասելիքի տարբերությունը բազմատաղանդ ժամանակակիցների մրցավազքում: 19-րդ դարի վերջին հնգամյակում Համիդյան վարչակարգի բարբարոսական հալածանքներով ընդհատվեց արևմտահայ գրական-ռեալիստական շարժումը: Կոտորածներն ու բռնությունները խաթարեցին հայ հասարակական ու մշակութային կյանքի բնականոն ընթացքը, սակայն 20-րդ դարասկզբի առաջին տասնամյակում արևմտահայ գրողների ու մտավորականների ասպարեզ իջած հսկա աստղաբույր սկսեց ավելի ակտիվ գործունեություն ծավալել, այդ թվում և Ռուբեն Սևակը: Վ. Կիրակոսյանը ներկայացնում է նրան Արտաշես Հարությունյանի, Արփ. Արփիարյանի, Արշակ Չոպանյանի, Վահան Մալեգյանի, Միպիլի, Ռուբեն Որբերյանի, Վահան Թեքեյանի, Գարեգին Պեշկյուրյանի, Ինտրայի, Զապել Եսայանի, Սիրունու, Հակոբ Քյուֆեճյանի /Օշական/, Կոստան Զարյանի, Գեղամ Բարսեղյանի, Փանոս Թերլեմեզյանի, Կոմիտասի և մի շարք այլ անվանի մտավորականների հետ ունեցած հարաբերություններում: Կիրակոսյանը համարձակորեն նկատում է նաև, որ լինելով արևմտահայ գրականության ավանդների հաստատող ու շարունակող՝ Սևակն իր սերնդակիցներից առավել մոտ է կանգնած արևելահայ բանաստեղծական դպրոցին՝ չնայած չհասցրեց ասել իր վերջին խոսքը, որը ամբողջ սերնդի դժբախտությունն էր: Կիրակոսյանը գտնում է. «Նա ապրեց իր տաղանդի ծաղկման շրջանը, նրա ստեղծագործությունն այսօր մեզ համար ներկայացնում է գաղափարական ու գեղարվեստական մի ավարտուն ամբողջություն, որով և գծագրվում է նրա ինքնուրույն դեմքը դարասկզբի հայ պոեզիայի ընդհանուր ֆոնի վրա »²:

«Ռուբեն Սևակ (կյանքը և ստեղծագործությունը)» մենագրությամբ Վ.Կիրակոսյանն իր առջև խնդիր էր դրել բացահայտել ու մեկնաբանել երկու դարերի սահմանագծի արևմտահայ քնարերգության գեղարվեստական համատեքստում Ռուբեն Սևակի գրական ժառանգության արժևորումը:

Հայտնի է, որ մեծ բանաստեղծներ ունենալու համար հարկավոր է մեծ լսարան, սակայն բանաստեղծներին ճանաչելի է դարձնում ոչ պակաս մեծ գրականագետն ու քննադատը: Եթե գրականության դերն

² Էջ 167:

խրադարձությունները գաղափար դարձնելն է, ապա այդ գաղափարների հաջողված լինելն ու հասարակության համար ընդունելի դարձնողն ու արժևորողը գրականության տեսաբանն է: Ոչ մի հանճարեղ ստեղծագործություն միանգամից զլուխգործոց չի լինում, այն դառնում է այդպիսին ավելի շատ և ավելի շուտ գրականագիտական քննության հետևանքում: Տեղին է Ս. Մուրադյանի այն պնդումը³, թե այն քննադատներն են բանաստեղծներին ճիշտ մեկնաբանում, որոնք իրենք էլ հոգով բանաստեղծ են: Բանաստեղծի նուրբ զգացողությամբ է օժտված նաև Վ. Կիրակոսյանը, ով այնքան խորությամբ ու ընդգրկուն է ներկայացրել Սևակի բազմաթեմա, բազմաժանր ու բազմաբնույթ երկերը, որ դարձել է բանաստեղծի և դեռ անձանոթ՝ ընթերցողի միջև պոեզիայի անօրինակ զգացմունքային կամուրջ: «Գեղեցիկը տեսնողը՝ մասնակիցն է նրա արարման», - Բոուվի այս հանրահայտ միտքը գալիս է հաստատելու, որ գրականագետ Կիրակոսյանը՝ որպես առաջիններից մեկը Ռուբեն Սևակի ստեղծագործությունների խորքային արժևորող, անուրանալի դեր ունի հայ գրականագիտության մեջ: Մենագրության հեղինակի՝ Ռուբեն Սևակ բանաստեղծի գիտական կենսագրությունն ու գրական ժառանգության գնահատությունն ազդակ ու հիմք է հանդիսացել գրականագետ, արձակագիր Հ. Հակոբջանյանի համար՝ 1997 թվականին հրատարակելու Սևակի կյանքի ու սիրո գեղարվեստական պատմությունը «Մայիտակ Էղլվեյսներ» վերնագրով կենսագրավեպում:

Վ. Կիրակոսյանի «Ռուբեն Սևակ (կյանքը և ստեղծագործությունը)» մենագրությունը 224 էջ է, կազմված է առաջաբանից և վեց բաժիններից՝ «Կյանքը», «Գրական-հասարակական միջավայրը», «Քառուրդ», «Կարմիր գիրքը», «Միրո գիրքը», «Բժիշկին գիրքեն փրցում էջեր»: Կիրակոսյանն ամբողջացնում է նախորդ ուսումնասիրությունների՝ արդյունքում ներկայացված սևակագիտության որոշ դրվագներ՝ հավելելով պարբերական մամուլից քաղված և հեղինակի կերպարն ու գործը լուսաբանող ու նորացված լույսի ներքո ներկայացվող խիզախումներ: Հետաքրքիր ուղեցույց է մենագրության բովանդակությունը. այն բանաստեղծի ստեղծագործական թեմատիկայի ու գաղափարական հյուսվածքի առանձնահատկություններով է բնութագրվում: Տեղին է նշել Կիրակոսյանը, որ Ռուբեն Սևակի քնարաշունչ երկերը դարասկզբի արևմտահայ գրականության հակասական և միևնույն ժամանակ ամենահետաքրքիր ու տարողունակ երևույթներից են: Գիտական առումով պատշաճ գրագետ մոտեցման արդյունքն է, որ Կիրակոսյանը Սևակի

³ Տե՛ս Ս. Մուրադյան, Գրական հանգրվաններ, հ. Գ, Ե., 2010, էջ 343:

պոետական վերլուծություններն իրավացիորեն դիտարկել է պատմական ու հասարակական խնդիրների համատեքստում: Հավատարիմ մնալով հեղինակի ստեղծագործական-գեղարվեստական միասնականությանը, գրականագետը պահպանված ձեռագրերից, մամուլում տպագրված որոշ ստեղծագործությունների վերաբերյալ հեղինակային նշումներից է մոտավոր պարզել մյուս շարքերի հավանական սահմանները, բնույթն ու բովանդակությունը: Կենդանության օրոք Ռուբեն Սևակը բախտ ունեցավ տպագրված տեսնել միայն «Կարմիր գիրքը», ուստի մնացյալ չորս շարքերը Կիրակոսյանը մանրակրկիտ ու հետևողական աշխատանքի շնորհիվ ներկայացրել է իր կողմից կազմած բաժանումներով, որոնք հավատարիմ են հեղինակային մտածողությանը:

Սևակի ազգային-քաղաքական հայացքներն ամբողջացնող «Կարմիր գիրք» և «Վերջին հայերը» շարքերը դիտվել են միասնության մեջ և ներկայացվել որպես արձագանք 1909-ի ապրիլին Ադանայում Երիտթուրքերի կազմակերպած ողբերգական ջարդերի, որի արդյունքում զոհ գնաց շուրջ 30000 հայ: Միասնաբար, մեկ խորագրի տակ են քննվել նաև «Քառս» և «Չհասկացվածները» շարքերը: Մենագրության ամենածավալուն, հետաքրքրական լուծումներով ու մեկնաբանություններով հատվածը սիրո խորհուրդն է իր մեջ ամփոփում «Սիրո գիրքը» խոստուն վերտառությամբ, որը Ռուբեն Սևակի կյանքի, արվեստի, անմեղք սիրո, անմահության ու նաև անանձնական երջանկության պոետական արձագանքն է: Ե՛վ Սևակի, և՛ սևակագետ Կիրակոսյանի համար սիրո խորհուրդը կյանքի բովանդակության ու իմաստի վկայությունն է: Հարցի նույնանման մտածողությունն է, որ ճշմարիտ երանգ ու լույս է սփռում սիրո երգերին, որն էլ Սևակի պոեզիայի առանցքն է կազմում: Այսօրինակ մոտեցումն է պատճառը, որ Կիրակոսյանի մտապատկերներում հարազատորեն արտացոլվել է Սևակի ստեղծագործությունների գաղափարագեղարվեստական միասնությունը: Փորձելով չխախտել այն, գրականագետը տալիս է ժամանակի բազմաբարդ ու հակասական դրսևորումների հոլովույթում մարդու, անհատի, հասարակական միջավայրի ընդհանուր դրսևորումների բնութագրումներ, օգնում ավելի պարզ ու տեսանելի ընկալել բարդ թվացող խնդիրները, առանց որի սևակյան ստեղծագործությունները կմնային որպես անմատչելի ու խրթին երևույթներ: Գեղեցիկ ապրած օրերի հեքիաթ է հիշեցնում Վ. Կիրակոսյանի ռուբենսական սիրերգությունը: Քնքուշ, ռոմանտիկ գույներով է պատկերված բանաստեղծի կյանքի արշալույսն ու ընտանեկան երջանկության առասպելը, որը խամրում է ազգին պատուհասած մռայլ արհավիրքով, ու ընդհատվում է պայծառ հոգու մի չքնաղ պատում. ոճրագործների ձեռքով ընդհատվում է և՛ կյանք, և՛ սեր, և՛ երագ...

Մինչդեռ... Առանձնացրել է Կիրակոսյանը սևակյան այս տողերը.
Տարիներով կարոտ ունիմ սիրագին...

...

Այգիներուն, գերեզմանին, լուսնակին,

Եվ ժայռերուն, որ իմ ծընիլըս տեսան...⁴

Մենագրությունը եզրափակվում է նախադեպը չունեցող նովելաշարով՝ «Բժիշկի գիրքեն փրցված էջեր» ընդհանուր խորագրով: Կիրակոսյանի բնութագրմամբ այն բժիշկ բանաստեղծի օրագրություններ են՝ սովորական թվացող հիվանդությունների ու հիվանդների մասին: Ըստ Կիրակոսյանի՝ Սևակը հիվանդանոցը դիտում է իբրև թատերաբեմ, ուր խաղացվում է կյանքի անվերջանալի դրաման՝ վեր հանելով մի ամբողջ հասարակության ճշմարիտ պատկեր:

Վ. Կիրակոսյանը քննության է ենթարկել ու կարևորել Սևակի հայրենիքի երգը, որի պատմությամբ ու հերոսամարտերով հպարտանում էր բանաստեղծը, քանզի հենց դրանով է ազգը վաստակել այս հին ու չար աշխարհում իր արժանապատիվ ապրելու իրավունքը:

Ու երբ դեռ երկրի վրա Ազատության

Համար մեռնին ա փ մը մարդեր չնչի՛ն,

Անանք պիտ ըլլան Մարդկության վերջի՛ն,

Վերջին Հայե՛րը...⁵

Սևակը երգում է իր երգը. կյանքի ու երջանկության աղբյուր բնության, մարդու խոհի ու սիրո երգը, հայրենիքի ու հոգու այն երգը, որն իր վերերկրային ձգտությունով ու անկեղծ կարոտներով բարձրացնում է մարդուն բարոյագուրկ ու խղճուկ աշխարհի մոլորուն անդունդներից: Իրենց ընկալումներում ու գնահատականներում նման են իրար գրականագետ Վ. Կիրակոսյանն ու բանաստեղծ Ռուբեն Սևակը, հակառակ դեպքում չէր ստեղծվի երգի ու մեկնության այս միասնությունը՝ «Ռուբեն Սևակ/ կյանքն ու ստեղծագործությունը/» մենագրությունը:

Վ. Կիրակոսյանը գրում է, որ Սևակը երգում է իր անվախճան երգը՝ անգիտակ կյանքի ու մահվան եղերապատում դրամայի: Անհամար սերունդներ են հաջորդել միմյանց, սիրել են, տրտմել և ուրախացել, բայց անցել անհետ: Եվ երբ այսօրվա երգչից «մի բուռ հող մնա միայն», վաղը մի ուրիշը կգա ապարդյուն ջանքով՝ բնության «վայրի երգերը հանգի, չափի տակ առնելու»:

Մինչ հավերժորեն կյանքո՛ւտ, զվարթո՛ւն,

⁴ Ռուբեն Սևակ, Երկեր, Ե., 1985, էջ 105:

⁵ Նույն տեղում, էջ 108:

Պիտի կարկաջն քու ջուրդ մշտաշարժ՝
Հեզնելով արվեստն ու կյանքը մարդուն...
Ո՛վ անմահության ստվե՛ր գետնաքարշ.
Վտա՛կ, երնե՛կ քեզ, մեռնիլ չունիս դուն⁶:

Եզրակացություն

Բանաստեղծի նուրբ զգացողությամբ է օժտված Վ. Կիրակոսյանը, ով այնքան խորությամբ ու ընդգրկուն է ներկայացրել Ռուբեն Սևակի բազմաթեմա, բազմաժանր ու բազմաբնույթ երկերը, որ դարձել է բանաստեղծի և դեռ անծանոթ ընթերցողի միջև պոեզիայի անօրինակ զգացմունքային կամուրջ: Կիրակոսյանի համար սիրո խորհուրդը կյանքի բովանդակության ու իմաստի վկայությունն է: Հարցի նույնանման մտածողությունն է, որ ճշմարիտ երանգ ու լույս է սփռում սիրո երգերին, որն էլ Սևակի պոեզիայի առանցքն է կազմում: Այսօրինակ մոտեցումն է պատճառը, որ Կիրակոսյանի մտապատկերներում հարազատորեն արտացոլվել է Սևակի ստեղծագործությունների գաղափարագեղարվեստական միասնությունը: Փորձելով չխախտել այն՝ գրականագետը տալիս է ժամանակի բազմաբարդ ու հակասական դրսևորումների հոլովություն մարդու, անհատի, հասարակական միջավայրի ընդհանուր դրսևորումների բնութագրումներ, օգնում ավելի պարզ ու տեսանելի ընկալել բարդ թվացող խնդիրները, առանց որի սևակյան ստեղծագործությունները կմնային որպես անմատչելի ու խրթին երևույթներ: Գեղեցիկ ապրած օրերի հեքիաթ է հիշեցնում Վ.Կիրակոսյանի ռուբենսական սիրերգությունը: Քնքուշ, ռոմանտիկ գույներով է պատկերված բանաստեղծի կյանքի արշալույսն ու ընտանեկան երջանկության առասպելը, որը խամրում է ազգին պատուհասած մռայլ արհավիրքով, ու ընդհատվում է պայծառ հոգու մի չքնաղ պատում. ոճրագործների ձեռքով ընդհատվում է ն՛կյանք, ն՛սեր, ն՛երագ...

Քննության է ենթարկվել ու կարևորվել նաև Սևակի հայրենիքի երգը, որի պատմությամբ ու հերոսամարտերով հպարտանում էր բանաստեղծը, քանզի հենց դրանցով է ազգը վաստակել այս հին ու չար աշխարհում իր արժանապատիվ ապրելու իրավունքը:

Իրենց ընկալումներում ու գնահատականներում նման են իրար՝ գրականագետ Վլադիմիր Կիրակոսյանն ու բանաստեղծ Ռուբեն Սևակը՝ հակառակ դեպքում չէր ստեղծվի երգի ու մեկնության այս հաջողված միասնությունը:

⁶ Նույն տեղում, էջ 122:

Монограмма Владимира Киракосяна «Рубен Севак (жизнь и творчество)»

Заключение

Ключевые слова и выражения: западно-армянская поэзия, литературоведческий, поэт, педагогический Лениакана /Гюмри/, национально-политические взгляды, Институт литературы имени М. Абегяна НАН РА .

Рамки научных интересов В. Киракосяна в большей степени включают в себя армянскую литературу конца 19-ого и начала 20-ого веков. Когда в 1967-ом году защитил кандидатскую диссертацию в Институте литературы имени Манука Абангяна о жизни и творчестве ставшего жертвой Геноцида западноармянского поэта Рубена Севака, прошло всего 8 лет с тех пор, как он окончил отделение армянского языка и литературы Лениаканского /Гюмрийского/ педагогического института. В. Киракосян поставил перед собой задачу открыть и прокомментировать в художественном контексте западно-армянской лирики оценку литературного наследия Рубена Севака на рубеже двух веков, замечая, что лирические произведения Рубена Севака являются противоречивыми, и в то же время одними из наименее интересных и емких явлений западноармянской литературы начала века. Стараясь не нарушить идейно-художественное единство творчества Севака, Киракосян представляет характеристики общих проявлений человеческого, индивидуального, социального окружения в развитии сложных и противоречивых проявлений времени, помогает яснее и нагляднее воспринимать сложные на взгляд проблемы.

Владимир Киракосян наделен тонким чувством поэта, который так глубоко и всесторонне представил многотематическое, многожанровое и многогранное творчество Рубена Севака, что это стало своеобразным эмоциональным мостом поэзии между поэтом и еще неизвестным читателем. Для Киракосяна таинство любви – свидетельство содержания и смысла жизни. Именно подобное осмысление вопроса придает истинный оттенок и свет любовным песням, составляющими стержень поэзии Севака. И такой подход является причиной того, что в представлениях Киракосяна так тепло отразилось идейно-художественное единство творчества Севака. Стараясь не нарушить его, литературовед представляет в сложных и противоречивых проявлениях времени характеристику общих проявлений человека, индивида, социальной среды, помогает яснее и нагляднее воспринимать кажущиеся сложными проблемы, без чего произведения Севака остались бы недоступными и трудными явлениями.

Сказку о пережитых прекрасных днях напоминает рубенсеваковская любовная лирика В. Киракосяна. В нежных, романтических тонах изображены рассвет жизни поэта и легенда о семейном счастье, которая меркнет с мрачным бедствием, настигшим нацию; и прерывается прекрасное повествование лучезарной души, руками преступников прерывается и жизнь, и любовь, и мечта...

Была изучена и обрела значимость также песнь о родине Севака, историей и героическими битвами которой гордился поэт, так как именно благодаря им нация заработала свое право достойно жить в этом древнем и злом мире.

Схожи в своих восприятиях и оценках литературовед Владимир Киракосян и поэт Рубен Севак, иначе не был бы создан этот удачный союз песни и интерпретации.

Naira Khachatryan

Monogram of Vladimir Kirakosyan "Ruben Sevak (life and work)"

Conclusion

Key words and expressions: Western Armenian poetry, literature-critical, poet, Pedagogical of Leninakan /Gyumri/, national-political views, Institute of Literature after M. Abeghyan of NAS RA .

V. Kirakosyan's scientific interests mostly include Armenian literature of the late 19th and early 20th centuries. When in 1967 he defended his Ph.D. thesis at the Institute of Literature after Manuk Abangyan on the life and work of the Western Armenian poet Ruben Sevak, who became a victim of the Genocide, only 8 years had passed since he graduated from the Department of Armenian Language and Literature of the Leninakan /Gyumri/ Pedagogical Institute. V. Kirakosyan set a task to open and comment in the artistic context of Western Armenian lyrics assessment of the literary heritage of Ruben Sevak at the turn of two centuries, noticing that the lyrical works of Ruben Sevak are contradictory, and at the same time one of the most interesting and capacious phenomena of Western Armenian literature at the beginning of the century. Trying not to break the ideological and artistic unity of the works of Sevak, Kirakosyan represents the characteristics of the general manifestations of the human, individual, social environment in the development of complex and contradictory manifestations of time, helps to perceive the seemingly complicated problems more clearly and descriptively.

Vladimir Kirakosyan is endowed with a subtle sense of the poet, who presented the multi-thematic, multi-genre and multi-faceted work of Ruben Sevak so deeply and comprehensively that it became a kind of emotional bridge of

poetry between the poet and the still unfamiliar reader. For Kirakosyan, the sacrament of love is evidence of the content and meaning of life. Namely this understanding of the issue gives the true shade and light to the love songs that form the core of Sevak's poetry. This approach is the reason of why the ideological and artistic unity of Sevak's works is so warmly reflected in Kirakosyan's imaginations. Trying not to violate it, the literary critic presents in the complex and contradictory manifestations of time a characteristic of the general manifestations of a person, an individual, a social environment, helps to perceive the seemingly complex problems more clearly and more obviously, without which Sevak's works would remain inaccessible and difficult phenomena.

Love lyrics of Ruben Sevak by V. Kirakosyan reminds of the fairy tale of beautiful days gone. In gentle, romantic tones, the dawn of the poet's life and the legend of family happiness are depicted, which fades with the gloomy disaster that has overtaken the nation; and the beautiful narration of the bright soul is interrupted, by hands of murderers are interrupted both life, and love, and dreams...

Sevak's song on the homeland was also studied and gained significance, of the history and heroic battles of which the poet was proud, as thanks to them the nation has earned its right to live with dignity in this ancient and evil world.

The literary critic Vladimir Kirakosyan and the poet Ruben Sevak are similar in their perceptions and assessments, otherwise this successful union of song and interpretation would not have been created.

Խմբագրություն է ուղարկվել 24.08.2023թ

Հանձնարարվել է գրախոսության 25.09.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 29.09.2023թ.